ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «----------» 2010թ. N ----- Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով, ինչպես նաև «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին՝ 2010 թվականի հուլիսի 8-ից մինչև 2011 թվականի հուլիսի 8-ը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մատուցվող ծառայությունների դիմաց սուբսիդիայի կարգով գների տարբերությունը փոխհատուցելու նպատակով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել, որ Երևան համայնքը 2010 թվականի հուլիսի 8-ից մինչև 2011 թվականի հուլիսի 8-ը ընկած ժամանակահատվածում ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սպառողների օգտին «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը կվճարի սուբսիդիաներ՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 8-ի «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին» N 272-Ն որոշման 1-ին կետի 1), 2) և 3) ենթակետերով սահմանված սակագները սպառողների համար անփոփոխ թողնելու նպատակով:
2. Առաջարկել «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2011 թվականի հուլիսի 8-ը մատակարարված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց սպառողներից վճարումները գանձել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող

հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 8-ի «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին» N 272-Ն որոշման 1-ին կետի 1), 2) և 3) ենթակետերով սահմանված սակագներով։

3. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել մինչև 340,000.0 հազ. դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով՝ 2010 թվականի հուլիսի 8-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման՝ սպառողներին մատուցվող ծառայությունների դիմաց գների տարբերությունը փոխհատուցելու նպատակով՝ «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրելու համար։

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 3-րդ կետի հիման վրա Երևանի քաղաքապետարանի և «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքվող սուբսիդիայի տրամադրման պայմանագրում նախատեսել, որ սուբսիդիան տրամադրվում է ամսական կտրվածքով յուրաքանչյուր ամսվա փաստացի մատուցված ծառայությունների վերաբերյալ «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հաշվետվության հիման վրա։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 8-ի «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին» N 272-Ն որոշման՝ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և մաքրման ծառայությունների ընդհանուր սակագինը մեկ խմ–ի համար սահմանվել է 181 ՀՀ դրամ: 2010 թվականի հուլիսի 8-ից կանխատեսվում է, որ «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները սահմանվելու են մեկ խմ–ի համար ընդհանուր մոտ 195 ՀՀ դրամի չափով:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սակագները մեղմելու նպատակով սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից 2010 թվականի հուլիսի 8-ից մինչև 2011 թվականի հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց, սպառողների օգտին «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը վճարել սուբսիդիաներ «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին ծառայությունները ներկայումս գործող գներով մատուցելու և չթանկացնելու համար:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2010 թվականի հուլիսի 8-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31–ը ընկած ժամանակահատվածի համար սպառողներին մատուցվող ծառայությունների դիմաց գների տարբերությունը փոխհատուցելու նպատակով «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը որպես սուբսիդիա տրամադրել մինչև 340,000.0 հազ. դրամ, որի հիմքում ընկած են հետևյալ հաշվարկները.

- 2009 թվականի համար «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների քանակը փաստացի կազմել է 54.0 մլն խմ ջուր, որից հուլիս-դեկտեմբերի ամիսներին՝ 27.5 մլն խմ,

- կանխատեսվող թանկացման դեպքում սակագների տարբերությունը կկազմի 14 ՀՀ դրամ, որն առանց ավելացված արժեքի հարկի կկազմի 11,667 ՀՀ դրամ, որից՝ միայն խմելու ջրի մատակարարման մասով՝ 9.917 ՀՀ դրամ, ջրահեռացման համար՝ 0.817 ՀՀ դրամ և կեղտաջրերի մաքրման համար՝ 0.933 ՀՀ դրամ։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կանխատեսվում է, որ 2010 թվականի հուլիսի 8-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31–ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և մաքրման ծավալները կկազմեն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծավալներից շուրջ 5%–ով ավելի, ինչից ելնելով «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը փոխհատուցվող գումարի չափը 2010 թվականի համար կկազմի շուրջ 340,000.0 հազ. դրամ, սակայն հաշվի առնելով՝ որ հաշվարկները հիմնված են կանխատեսումների վրա, նախատեսվում է 2010 թվականին «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրվող սուբսիդիայի չափը սույն որոշման նախագծով սահմանել մինչև 340,000.0 հազ. դրամ, որը կտրամադրվի յուրաքանչյուր ամսվա փաստացի մատուցված ծառայությունների վերաբերյալ «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հաշվետվության հիման վրա։

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների մեղմացման միջոցառումների և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ

,ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների մեղմացման միջոցառումների և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ